«ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-380-19.11.2019-ԱՀ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը «Դիվանագիտական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ:

Համաձայն «Դիվանագիտական ծառայության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի՝ դիվանագիտական ներկայացուցիչները նշանակվում են մինչև չորս տարի ժամկետով, իսկ պաշտոնավարման ժամկետի ավարտից հետո անմիջապես այլ պետությունում դիվանագիտական ներկայացուցչի պաշտոնում նշանակվելու դեպքում՝ մինչև երեք տարի ժամկետով: Անհրաժեշտության դեպքում նշված ժամկետները կարող են երկարաձգվել կամ կրճատվել սույն օրենքի 14-րդ հոդվածով սահմանված կարգով:

Առաջարկվող փոփոխությունով նախատեսվում է, որ դիվանագիտական ներկայացուցիչը պաշտոնավարման ժամկետի ավարտից հետո առնվազն 2 տարի պետք է աշխատի Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության համակարգում (ենթադրվում է՝ ԱԳՆ կենտրոնական ապարատում), որից հետո միայն կարող է նշանակում ստանալ մեկ այլ երկրում:

Առաջարկվող փոփոխությունը հաշվի չի առնում դիվանագիտական ներկայացուցչի նշանակման հարցում արտաքին քաղաքական նպատակահարմարությունը և կադրային անհրաժեշտությունը: Ավելին, այն սահմանափակում է դիվանագիտական ներկայացուցչի նշանակման հարցում ԱԳՆ-ի ճկունությունը:

Միաժամանակ, նախագծին կից ներկայացված հիմնավորումը չի պարունակում կարգավորման համար առաջարկվող ոլորտին վերաբերող լիարժեք տեղեկատվություն. ներկայացված չեն այլ պետություններում նմանատիպ կարգավորման օրինակներ: Մինչդեռ,

միջազգային փորձի ուսումնասիրությունը, ինչը սկզբունքային նշանակություն ունի տվյալ հարցում ճիշտ կողմնորոշվելու համար, ցույց է տալիս, որ պետությունների գերակշռող մեծամասնությունում (օրինակ՝ Հյուսիսային Ամերիկայի, Եվրոպայի և նախկին ԽՍՀՄ տարածաշրջանների գրեթե բոլոր երկրներում) դիվանագիտական ներկայացուցիչների նշանակման համար նման սահմանափակումներ չեն նախատեսված: Ավելին՝ միջազգային հարաբերություններում կարևոր համարվող կենտրոններում նշանակվում են որպես կանոն այլ երկրում արդեն իսկ դեսպան հանդիսացող փորձառու անձինք իրենց պաշտոնավարումն ավարտելուց անմիջապես հետո, ինչը երբեմն ընկալվում է նաև տվյալ երկրի հետ երկկողմ հարաբերությունների կարևորության ընդգծման ժեստ:

Նախագծով ներկայացված ձևակերպմամբ՝ լավագույն աշխատանքի արդյունավետություն ապահոված դիվանագիտական ներկայացուցիչները նույն պաշտոնում կարող են պաշտոնավարել 4 տարի և պաշտոնավարման ժամկետի ավարտից հետո՝ ևս 2 տարի: Միաժամանակ, չնայած իրենց բարձր որակավորմանը և կարողություններին, պաշտոնավարումից հետո անմիջապես այլ պետությունում դիվանագիտական ներկայացուցչի պաշտոնում նշանակվել չեն կարող, որն էլ, մեր կարծիքով, սահմանափակում է պրոֆեսիոնալ մասնագիտական կարողություններ ունեցող դիվանագիտական ներկայացուցիչներին դրսևորել իրենց կարողություններն ի շահ պետության:

Միաժամանակ գտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության համակարգում կադրային քաղաքականությանը վերաբերող սկզբունքային փոփոխությունները ենթակա են ուսումնասիրման և հետագա քննարկման ոչ թե հատվածական, այլ համալիր բարեփոխումների շրջանակներում: Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության վարչապետի կողմից որդեգրված՝ դիվանագիտական ծառայության փորձ ունեցող անձանց շրջանակից դիվանագիտական ներկայացուցիչների նշանակման քաղաքականությունը համեմատաբար նոր է: Դրա գործնական կիրարկման

նպատակով ներկայում իրականացվում են Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության կադրային քաղաքականության սկզբունքների, ինչպես նաև դիվանագետների ռոտացիայի ներքին կանոնակարգերի մշակման աշխատանքներ՝ անձնակազմի նախապես ծրագրված պլանային կառավարման նպատակով: Ուստի, վերոնշյալ նախագծի կարգավորման առարկա հանդիսացող ժամկետների և սահմանափակումների վերաբերյալ հետագա որոշումների կայացումը պայմանավորված է լինելու այդ աշխատանք-ների արդյունքում ձեռք բերված տվյալներով և վիճակագրության վերլուծությամբ:

Ուստի, նախագծով առաջարկվող լուծումները գտնում ենք խնդրահարույց՝ ելնելով մարդկային ռեսուրսների արդյունավետ տեղաբաշխման անհրաժեշտությունից, միջազգային հարաբերություններում մեծամասնաբար գործող պրակտիկայից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության վարչապետի և Հայաստանի Հանրապետության նախագահի սահմանա-դրական լիազորությունների անխոչընդոտ իրականացման տեսանկյունից: